ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3566-Ա « 20 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի Հ.5205-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 09.07.2026թ. հ.12179, հ.12180, հ.12181, հ.12182 լրացուցիչ վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.05.2026թ. հ.20-Էլ-44448 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Սվետլանա Մանասարյանի 30.04.2026թ. հ.Դ-44448-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 25-ի «Ղարիբջանյան փողոցի հ.98 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Գոհարիկ Համբարձումի Մանուկյանի, Մամիկոն Համբարձումի Մանուկյանի, Անդրանիկ Համբարձումի Մանուկյանի, Արսեն Մամիկոնի Մանուկյանի, Գևորգ Մամիկոնի Մանուկյանի, Վարդուհի Մանուկյանի գույքային իրավունքները վերականգնելու, 231.44քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.5205-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, Երևան քաղաքի Ղարիբջանյան փողոց հ.98 հասցեում գտնվող 843.44 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրից, նախաբանից, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերից հանել «Գոհարիկ Համբարձումի Մանուկյանի» բառերը.

3) Որոշման նախաբանից հանել «Գոհարիկ Համբարձումի Մանուկյանի (ծնված 01.06.1920թ.)» բառերը.

4) Որոշման 3-րդ կետում՝ «աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարա՝ն դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ